

ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ՇԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն ոչ պաշտոնական պարզաբանումները (**այսուհետ՝ Պարզաբանումներ**) սահմանվել են «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ մասի 15-րդ կետի, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մասի և 87-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների հիման վրա:

1.2. Պարզաբանումները սահմանվել են հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի կողմից փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու լիազորությունն իրականացնելիս՝ հայտնաբերված փաստաբանների և նրանց վստահորդների միջև կնքված իրավաբանական օգնություն ցույց տալու մասին պայմանագրերի հետ կապված խնդիրները:

1.3. Պարզաբանումները կրում են խորհրդատվական բնույթ:

2. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

2.1. Իրավաբանական օգնություն ցույց տալու մասին պայմանագրերը դասակարգելիս կարևոր է պարզել փաստաբանական գործունեության բնույթը և իրավաբանական օգնություն ցույց տալու մասին պայմանագրի առարկան:

2.2. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանը կարող է իրականացնել հետևյալ գործունեությունը՝

1) խորհրդատվություն, ներառյալ՝ վստահորդներին խորհրդատվություն տրամադրելը նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը (**այսուհետ՝ խորհրդատվություն**).

- 2) ներկայացուցչություն, ներառյալ՝ ներկայացուցչությունը դատարանում (**այսուհետ՝ դատական ներկայացուցչություն**).
- 3) քրեական գործերով պաշտպանություն.
- 4) օրենքով նախատեսված դեպքում և կարգով վկային իրավաբանական օգնություն ցույց տալը:

2.3. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանական գործունեության վճարի չափն ու վճարման կարգը որոշվում են փաստաբանի և վստահորդի միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կնքված գրավոր պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր)*: Վերը նշված փաստաբանական գործունեությունն իրականացնելիս, փաստաբանը՝ վստահորդ-փաստաբան փոխհարաբերություններում, հիմնականում առնչվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված **Ծառայությունների վճարովի մատուցման (գլուխ 39)** և **Հանձնարարության (գլուխ 40)** ինստիտուտների հետ:

2.4. Ծառայությունների վճարովի մատուցում

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով՝ կատարողը պարտավորվում է պարտավորյալի առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ պարտավորյալն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար, իսկ 3-րդ մասի համաձայն՝ սույն գլխի կանոնները կիրառվում են կապի, բժշկական, անասնաբուժական, աուդիտորական, խորհրդատվական, տեղեկատվական, ուսուցման, զբոսաշրջիկության և այլ ծառայությունների պայմանագրերի նկատմամբ*:

Փաստաբանական գործունեությանն առնչվող ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի **առարկան** ոչ նյութական ծառայություններն են: Խորհրդատվության դեպքում, գործում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ գլխի կանոնները (Ծառայությունների վճարովի մատուցում):

2.5. Հանձնարարություն

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 782-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *հանձնարարության պայմանագրով մի կողմը (հանձնակատարը) պարտավորվում է մյուս կողմի (հանձնարարողի) անունից և նրա հաշվին կատարել որոշակի իրավաբանական գործողություններ: Հանձնակատարի կատարած գործարքից իրավունքները և պարտականություններն անմիջականորեն ծագում են հանձնարարողի համար*:

Հանձնարարության պայմանագրի **առարկան** հանձնարարողի անունից և նրա հաշվին հանձնակատարի կողմից կատարվող որոշակի իրավաբանական գործողություններն են: Դատական ներկայացուցչության դեպքում գործում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 40-րդ գլխի կանոնները (հանձնարարություն):

2.6. Հանձնարարության և Ծառայությունների վճարովի մատուցման առանձնահատկությունները

➤ Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի դեպքում՝

1) պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց՝ կատարողի փաստացի կատարած ծախսերը վճարելու պայմանով.

2) կատարողն իրավունք ունի հրաժարվել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց՝ պատվիրատուի վնասները լրիվ հատուցելու պայմանով.

3) գործում են կապալի պայմանագրի հետ կապված քաղաքացիաիրավական կանոնները:

➤ Հանձնարարության պայմանագրի դեպքում՝

1) հանձնարարողը պարտավոր է հանձնարարության պայմանագրով նախատեսված իրավաբանական գործողությունները կատարելու համար հանձնակատարին տալ լիազորագիր.

2) հանձնարարողը պարտավոր է հանձնակատարին ապահովել հանձնարարությունը կատարելու համար անհրաժեշտ միջոցներով.

3) հանձնարարողը պարտավոր է հատուցել հանձնակատարի կրած ծախսերը.

4) հանձնակատարն իրավունք ունի հանձնարարության կատարումը հանձնարարել այլ անձի.

5) հանձնարարողն իրավունք ունի ցանկացած ժամանակ վերացնել հանձնարարությունը, իսկ հանձնակատարը՝ հրաժարվել այն կատարելուց.

6) հանձնարարողի կողմից հանձնարարությունը վերացնելը հիմք չէ հանձնարարության պայմանագրի վերացմամբ հանձնակատարին պատճառված վնասները հատուցելու համար,

7) հանձնակատարի կողմից հանձնարարությունը կատարելուց հրաժարվելը հիմք չէ հանձնարարության պայմանագրի դադարեցմամբ հանձնարարողին պատճառած վնասները հատուցելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ հանձնակատարը հրաժարվել է այնպիսի պայմաններում, որոնցում հանձնարարողը զրկված է եղել իր շահերն այլ կերպ ապահովելու հնարավորությունից:

Այս երկու ինստիտուտների համեմատությամբ արձանագրված «հանձնարարության պայմանագրի» առանձնահատկությունները հիմնականում «կառուցված են» կողմերի վստահության վրա հիմնված հարաբերությունների վրա:

«Հանձնարարության պայմանագրի» շրջանակում փաստաբաններն առավել պաշտպանված են, իսկ փաստաբան-վստահող հարաբերությունները՝ առավել կարգավորված:

Հարկ է նկատել, որ որոշ դեպքերում, իրավաբանական օգնություն ցույց տալու մասին պայմանագիրը կարող է հանդիսանալ խառը պայմանագիր, այսինքն՝ այդ պայմանագրում կարող են ներառվել և ծառայությունների վճարովի մատուցման և հանձնարարության պայմանագրերի տարրեր:

3. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼԻՍ ՈՒՇԱԳՐԱՎ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

3.1. Վճարովի հիմունքներով իրավաբանական օգնություն ցույց տալու մասին պայմանագիրը պետք է կնքի փաստաբանական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատեր փաստաբանը կամ իրավաբանական անձը: Անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ չունեցող կամ իրավաբանական անձ չկազմավորած փաստաբանի կողմից մի քանի նման պայմանագրեր կնքելու վարքագիծը հարկային մարմնի կողմից կարող է որակվել որպես ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն և առաջացնել իրավական անբարենպաստ հետևանքներ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցում չունեցող (չհաշվառված) կամ հարկային մարմիններում չհաշվառված անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ (ապօրինի գործունեություն) զբաղվելու դեպքում գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս երկու հարյուր հազար դրամից...:

ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առանց պետական գրանցման, հաշվառման (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի) կամ առանց հատուկ թույլտվության (լիցենզիայի) լիցենզավորման ենթակա կամ օրենքով արգելված ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը, որը զուգորդվել է անձանց կամ կազմակերպություններին կամ պետությանը զգալի՝ վնաս պատճառելով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկ տարի ժամկետով:

3.2. Վճարովի հիմունքներով իրավաբանական օգնություն ցույց տալու մասին պայմանագրի գումարի գնանշումը և փոխանցումը պետք է կատարվի միայն ՀՀ դրամով բացառությամբ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի: Հակառակ դեպքում, փաստաբանական գործունեություն իրականացնող անձը (իրավաբանական անձի դեպքում՝ գործադիր մարմնի ղեկավարը) կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 165-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում

¹ զգալի չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից (500.000 ՀՀ դրամից) մինչև հազարապատիկի չափով գումարը

ապրանքների իրացման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման փողային գնանշումները, ինչպես նաև այդ գործարքների դիմաց դրամական (փողային) վճարումները Հայաստանի Հանրապետության դրամով իրականացնելու պահանջը չկատարելը առաջացնում են տուգանքի նշանակում՝ խախտման գումարի չափով, բայց ոչ պակաս, քան նվազագույն աշխատավարձի երկուհազարապարիկի չափով², ընդ որում՝ յուրաքանչյուր պահանջի մի քանի խախտումներ թույլ տալու դեպքում յուրաքանչյուր խախտում համարվում է մեկ խախտում:

3.3. Վճարովի հիմունքներով իրավաբանական օգնություն ցույց տալու մասին պայմանագրի գումարը պետք է վճարվի միայն անկանխիկ (բանկային) եղանակով, հակառակ դեպքում, ԱԶ փաստաբանը կամ փաստաբանական կազմակերպությունը պետք է ունենա հսկիչ-դրամարկղային մեքենա:

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 5.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորարական և (կամ) փաստաբանական գործունեություն իրականացնող անձինք հսկիչ-դրամարկղային մեքենաներ չեն կիրառում բնակչության հետ իրականացվող անկանխիկ գործարքների մասով:

² 2.000.000 ՀՀ դրամ